

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24941

05 JAN 2010

ԼԿԱՆՄ 0.0.0.ԶԻՆ 0.ԱՏԵՀԱՆԻ

№ 8 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ Ն.

331.881

Q-89

ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1003
13045



Պետական համարակալիություն, Տերեփան - 1926

331.881

6.89

25 FEB 2013

05 JAN 2010

ԱՐՆԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կուսակցությունը ավանդաբղն ե, առաջապահ զորամասը, վորն իր յետելից տանում ե պրոլետարիատի ամբողջ բանակը։ Այդ բանակը համարյա գլխովին ընդգրկված ե արհեստակցական միություններում։ Արհմիությունների մեջ կազմակերպված ե բոլոր վարձով աշխատողների 90 տոկոսը, այսինքն վարձով աշխատող յուրաքանչյուր հարյուր հոգուց միայն տասը հոգի չեն մտնում միության մեջ։ Թե վորքան մեծ ե արհմիութենական բանակը, մեզ ցույց ե տալիս հետեւյալ դիագրամման։

Արհմիությունների անդամների քանակը

Բոլոր միություններն ունեցել են՝

1924 թ. ապրիլի 1-ին 1925 թ. հոկտեմբերի 1-ին

5.823.000 7.847.000

(հինգ միլիոն 823 հազար) (յոթ միլիոն 847 հազար)

Դրանց թվում արդյունաբերական միություններում՝

2.224.000 2.788.000

(յերկու միլիոն 224 հազար) (յերկու միլիոն 788 հազար)

№ 474

Գրասեղմար № 992 (ր)

Տիրապետ 4000

Պետական առաջին տպարան Վաղարշապատում

Առանց սերտ կապ ունենալու արհեստակցությունների հետ՝ մեր կուսակցությունը չեր կարող հաջող պայքարել։ Ահա թե ինչու Լենինը արհմիությունների նշանակության մասին ասում է.

«Կառավարել յերկիրը և կենսագործել դիկտատորական առանց ամենասերտ կապ ունենալու արձնիությունների հետ, առանց նրանց ջերմ աջակցության, առանց նրանց ամենաանձնագործ աշխատանքի վոչ միայն տնտեսական, այլև ռուզամական շենք մեջ, մենք, հասկանալի յեւ, չելինք կարող վոչ միայն յերկու տարվա, այլև և 2 ամսվա ընթացքում»:

Մեր այս զըույցի մեջ մենք կքննենք խոր-
հըսկային արհեստակցական միությունների ներ-
կայիս անելիքները, վորը և հասկանալի կգարձնի
մեղ էնինից վերցրած մեջբերումք:

ԱՐՁԵՍԱԿՑԱԿՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՈՆԱԿՈՒՄ
ԵՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՅԵՐԸ, ԶԳՏՈՒՄ ԵՆ ԲԱՐԵԼ-
ՎԵԼ ՆՐԱՆՑ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Արքամիությունների առաջին
անկիցն ե—պաշտպանել բան-
ավագն և պատ-
պահեց բանվա-
գործների շահերը.
Ների վրա առանձնական անվի-
ճելի պարտականություն ու բարձրագույն պատպա-

Նել աշխատավորների շահերը, հնարավորության սահմաններում նպաստել նրանց նյութական կենցաղի բարձրացմանը»։ Այս ե ասում կռւսակցության 11-րդ համագումարի բանաձեռ, վորը հաստատել ե 14-րդ համագումարի կողմից։

Յերբեմն հարց ե առաջադրվում .— ԶԵ վոր
արդյունաբերությունը պատկանում ե բանվորա-
կան պետությանը: Պետական ձեռնարկության
գլուխ ե կանգնած վոչ թե կապիտալիստը, այլ
կարմիր տեսուչը, բանվոր դասակարգի գործա-
կատարը: Պետական ձեռնարկության մեջ ներ-
կայացված ե միայն բանվոր դասակարգը: Այդ
դեպքում արհմիություններն ուժից են պաշտ-
պանում բանվորների շահերը:

Նման դատողությունները ճիշտ չեն։ Պարզ
ե, վոր արհմիություններն ու տնտեսավարական
մարմինները, գործարանային կոմիտեն ու կար-
միք տեսուչը հավասար չափով շահագրգուված
են արդյունաբերության զարգացման խնդրով,
վորովհետև նրանց բոլորի նպատակը մի է՝ ամ-
րացնել պրոլետարիատի դիկտատուրան։ Բայց և
այնպես, արհմիությունները պարտավոր են յե-
ռանդուն կերպով պաշտպանել բանվորների շա-
հերր։

Կարմիր տեսչին կուսակցությունն ու պետությունն ասում են. — Մենք քեզ վստահում ենք



41709-68
SUN. 143M

բացառիկ կարեորություն ունեցող աշխատանք, դու կառուցում ես պրոլետարական դիկտատուրայի հենարանը: Յո անելիքն ե—ավելի լավ կազմակերպել արտադրությունը, ձգտել, վորպեսզի ձեռնարկությունն առանց մասսի աշխատի և շահույթ տա: Այդ են պահանջում վողջ բանվոր դասակարգի շահերը: Սակայն այդ խնդրի լուծման հետ միաժամանակ դու պետք ե հաշվի առնես և ձեռնարկության մեջ աշխատող բանվորների շահերը և գործ դնես բոլոր հնարավոր միջոցները՝ բարելավելու համար նրանց նյութական դրությունը:

Կուսակցության և պետության կողմից սահմանված այդ գիծը տնտեսավարների կողմից հաճախ աղավաղման ե յենթարկվում: Տնտեսավարները, վոր ձգտում են շահավետ դարձնելու ձեռնարկությունները, յերբեմն անհրաժեշտ չափով հաշվի չեն առնում բանվորների նյութական շահերը:

Կուսակցության 11. րդ համագումարի բանաձեռ տնտեսավարների նմանորինակ վարմունքը բացատրում ե նրանով, վոր տնտեսավարները «չափաղանց բարձր են դասում իրենց ձեռնարկության շահերը», և արհմիությունների անվիճելի պարտականությունն ե համարվում «անընդհատ ուղղել տնտեսական մարմինների սխալ-

ներն ու չափաղանցումները, ինչ չափով վոր նըանք բղխում են պետական ապարատի բյուրոկրատական աղավաղումներից»:

«Յերբ տնտեսավարների այս կամ այն բյուրոկրատիկ կարգադրությունները հակասում են մասսաների շահերին, արհմիությունները պետք ե շտկեն այն, այլ վոչ թե հաստատեն տնտեսավարի յուրաքանչյուր կարգադրությունը» (Տոմսկի):

Գործարանալին կոմիտեն պարտավոր ե «խոշոր ուշադրություն դարձնել բանվորական կենցաղի այսպես կոչվող «մանր հարցերին», վորովհետեւ այդ «մանր հարցերը» շատ կարևոր են բանվորների համար:

Արհմիության այն աշխատավորը, վորն այդ «մանր խնդիրներով» զբաղվելու «ժամանակ չունի», նշանակում ե նա կտրվել ե մասսաներից և դարձել բյուրոկրատ:

Արհմիությունը վատն ե այն գործարանալին պետք ե հաշվի կոմիտեն կամ արհմիության առնի ամբողջ վարչությունը, վորը չի կարողածովովրած նում ժամանակին ուղղել տնտեսակերը. սավարի սխալը: Կտրում ե իր կապերը մասսայի հետ այն գործարանալին կոմիտեն, վորը դարձել ե գործարանի վարչության հասարակ հավելվածը, վորն անմիջապես, առանց

կշռադատելու, համաձայնվում ե այն ամենի հետ,
ինչ վոր ասում է գործարանի տեսուչը:

Սակայն բանվոր դասակարգի շահերին զնա-
սում են և այն գործարանի կոմիտեները կամ
արհմիության վարչությունները, վորոնք տվյալ
ձեռնարկության բանվորների շահերը պաշտպա-
նելու գեղքում հաշվի չեն առնում՝ արտադրու-
թյան շահերը, չեն յենում ամբողջ ժողովրդա-
կան տնտեսության շահերից:

Չեռնարկության բանվորները շահագրգուված
են նրանում, վորպեսզի իրենց աշխատավարձը
հնարավորության սահմաններում բարձր լինի:
Բայց աշխատավարձի մակարդակը սահմանվում
է վոչ միայն տվյալ ձեռնարկության, այլ և յեր-
կը ժողովրդական տնտեսության կացությամբ:

Կան արդյունաբերության ճյուղեր, վոր շա-
հավետ են, կան այնպիսի ճյուղեր, վոր աննշան
շահույթ են ստանում: Կան, վերջապես, և այն-
պիսի ճյուղեր, վորոնք վոչ միայն շահույթ չեն
տալիս, այլ և վնաս են բերում պետության: Ամենից ավելի շահավետ են թեթև (մանածա-
գործական, կաշվի, սննդի ևալն) արդյունաբե-
րությունը, վորն աշխատում է անմիջապես շու-
կայի համար: Ավելի քիչ շահավետ ե ծանր ար-
դյունաբերությունը, վորն ամենակարևորն է ժո-
ղովրդական տնտեսության համար: Յեթե աշխա-

տավարձը սահմանելիս պետությունը յեներ մի-
այն տվյալ ձեռնարկության դրությունից, դրա
հետևանքն այն կլիներ, վոր պետական արդյու-
նաբերության զանազան բնագավառներում աշ-
խատող բանվորները միատեսակ չեյին վարձա-
տըրվի:

Աշխատավարձի մակարդակը պետք ե ապա-
հովի արդյունաբերության հետագա զարգացու-
մը: Պետական արդյունաբերությունից պետք ե
ստացվի վորոշ շահույթ, վորը գործադրվում ե
արտադրության հետագա լայնացման համար:

Յեփ, վերջապես, աշխատավարձի մակարդակը
կախված ե և բանվորի աշխատանքի արտադրո-
ղականությունից: Աշխատավարձը կարելի յե բար-
ձրացնել միայն այն չափով, ինչ չափով վոր ա-
ճում ե աշխատանքի արտադրողականությունը:

Արհմիություններն, իրենց աշխատավարձի
քաղաքականությունը կիրառելիս, պետք ե հաշ-
վի առնեն այս բոլոր հանգամանքները: Արհմիու-
թյունները միշտ պետք ե հիշեն, վոր իրենք հան-
դիսանում են պըղետարական դիկտատուրայի
պահապանները: Գործարանային կոմիտեն պետք
ե ձեռնարկության մեջ աշխատող բանվորների շա-
հերը համաձայնեցնի ամրող ժողովրդական տնտե-
սության, ամբողջ բանվոր դասակարգի շահերի
հետ, մեր բանվորական պետության շահերի հետ:

Արհմիությունը յերբեք չպետք է տնտեսական մարմինների համար անիրազործելի պահանջներ առաջադրի, վորովինեռև այդպիսի պահանջները, վորոնք իբր թե պաշտպանում են բանվորների շահերը, գործնականում ուղղված են ամբողջ բանվոր դասակարգի շահերի դեմ։ Արհեստակցական միությունը չպետք է քարշ գա բանվորների հետամնաց խավերի պոչից, այն հետամնաց խավերի, վորոնք չեն կարողանում իրենց անձնական շահերը կապել իրենց դասակարգի պայքարի շահերին։ Բացատրելով բանվորներին այդ կապը, արհմիություններն իրազործում են իրենց խոշորագույն անելիքներից մեկը—արհմիության անդամների կոմմունիստական դաստիարակության գործը։

Աշխատանքի արագությունը վերեռում մենք ասացինք, վորագրողականությունը յեզ առաջնաշատավարձի բարձրացումը լաւ առաջարկ կախված է բանվորի աշխատանքության առումից։ Այսինչ, համեմատելով աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության վիճակը ամբողջ 1925 թվի ընթացքում, մենք համոզվում ենք, վոր աշխատավարձի աճումն առաջ է անցել աշխատանքի արտադրողականության աճումից։ Այդ բանում մեզ համոզում է հետեյալ դիմումաման։

Մեկ բանվորը մի որվա բնբացեում միջին հաւաքով ինչ գումարի ապրանք է առադրել։

(1925 թ., հաշված նախապատերազմյան գներով)

Հունվար—մարտ	6 ա.	13 կ.—100%
Ապրիլ—հունիս	6 ,,	50 ,,—100%
Հուլիս—սեպտեմբ.	6 ,,	28 ,,—100%
Հոկտ.—դեկտեմբ.	6 ,,	25 ,,—102%

Ինչքան ապրանք կարսդ եր գնել բանվորնի մի որյա դատումով (заработок)։

Հունվար—մարտ	թեյ 1 ա.	81 կ.—100%
Ապրիլ—հունիս	1 ,,	92 ,,—106%
Հուլիս—սեպտեմբ.	2 ,,	15 ,,—119%
Հոկտեմբ.—դեկտ.	2 ,,	24 ,,—123%

Ինչպես տեսնում ենք, աշխատանքի արտադրողականությունն ամենից շատ բարձր է յեղել ապրիլ-հունիս ամիսներին, յերբ բանվորի մի որվա մշակածը հունվար ամսից բարձր է յեղել 37 կոպեկով, իսկ հոկտեմբեր-դեկտեմբեր՝ ամիսներին մշակածը բարձր է հունվար ամսից ընդամենը 12 կոպեկով։ Իսկ աշխատավարձը հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին բարձր է յեղել հունվար ամսվա աշխատավարձից 43 կոպեկով, այսինքն մեզ հինգերորդականից ավելի մասով։

Արհմիությունը բանվորների շահերը պաշտպաներն ինչպես են նելու նպատակով արհմիություն-պահպակ անում ները կոլեկտիվ պայմանագրեր հերք։ Են կնքում տնտեսական մարմինների հետ։ Զափազանց շատ աննշան թիվ են

կազմում այն հիմնարկությունները, վորտեղ կոլեկտիվ պայմանագրեր չեն կնքված:

Կոլեկտիվ պայմանագիրը — դա համաձայնություն ե, կնքված՝ արհմիությունների՝ վորտես բանվորների ներկայացուցիչների՝ և ադմինիստրացիայի (վարչության) միջև, բանվորների վարձի և աշխատանքի պայմանների մասին: Կոլեկտիվ պայմանագիրը բանվորներին ապահովում է տվյալ ձեռնարկության մեջ աշխատելու անհրաժեշտ պայմանները, իսկ բանվորական պետությանը — ձեռնարկության նորմալ և ճիշտ աշխատանքը:

«Մի կողմը — տնտեսավարը — իր վրա պարտավորություն ե վերցնում և ասում. — յես պարտավորվում եմ վճարել այս և այս, չփոխել աշխատանքի պայմանները և չվատացնել այն այսքան ժամանակամիջոցում Մյուս կողմը — արհեստակցական միությունը — ստորագրելով կոլեկտիվ պայմանագիրը, խստում ե տալիս, իր վրա պարտավորություն ե վերցնում, վոր իր անդամները պետք ե աշխատեն այս ինչ կարգով և այս ինչ պայմաններում և չպետք ե փորձեն փոխել այն վորոշ ժամանակի ընթացքում» (Տոմսկու կուսակցության 14-րդ համագումարում արտասահմած ճառից):

Աշխատավարձի մասին համաձայնվելուց բա-

ցի, կոլեկտիվ պայմանագիրը պետք ե մատնացույց անի Աշխատանքի Որենսգրքում հիշված բանվորի բոլոր իրավունքները աշխատանքի պաշտպանության հարցում: Որենսգրքի կանոնները մեր հեղափոխության խոշորագույն հաղթանակներից մեկն ե: Վոչ մի յերկրում բանվոր դասակարգը չի ոգտվում աշխատանքի պաշտպանության այնպիսի իրավունքներով, ինչպես ոգտվում են ԽՍՀՄ մեջ: Վոչ մի յերկրում բանվորը չի ոգտվում մի տարվա ընթացքում արրվող յերկշաբաթյա կամ մի ամսվա արձակուրդով: Վոչ մի յերկրում այն չափով չեն պաշտպանվում բանվորունու մայրության շահերը, վորչափաշտպանվում են մեզ մոտ: Վոչ մի յերկրում այնպես չի պաշտպանվում անշափահանուների աշխատանքը: Վոչ մի յերկրում բանվորի հանգիստն այնքան լայն չի կազմակերպված (հանգստյան տներ, սանատորիաներ և այլն):

Կոլեկտիվ պայմանագիրը պետք ե լայն ըննության յենթարկվի ծեռնադիության բանվորների կողմից: Անհրաժեշտ ե, վորպեսզի «նրանք, վորոնց կողմից ստորագրում ե արհմիությունը, իմանան, թե ինչում, ինչ հոդվածների առօնիվ ե արհմիությունը կովում, թե բանվորների անունից ինչ պարտավորություններ ե իր վրա վերցրել արհմիությունը, և տան այդ մասին

իրենց համաձայնությունը» (Տոմսկու նույն համբաց):

Կոլեկտիվ պայմանագիրը կարող ե ընդգրք-կել միայն մի ձեռնարկություն կամ վորոշ շրր-ջանի և նույնիսկ Խորհրդացին Միության ար-դյունաբերության վորևե բնագավառ։ Այդպիսին ե, որինակ, այն կոլեկտիվ պայմանագիրը, վոր կնքվել ե յերկաթուղայինների միության և հա-զորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի միջև։ Աշխատանքի պաշտպանու-թյան ասպարիգում տնտեսավարների հանձն ա-ռած պարտավորությունների կիրառմանը հե-տեւում ե գործարանային կոմիտեյին կից աշխա-տանքի պաշտպանության հանձնաժողովը (կո-միսիան)։ Կոմիսիան հետեւում ե, վորպեսզի պահ-պանվի նորմալ բանվորական որը և արձակուրդ-ների հերթը, կոմիսիան կենսագործում ե ար-տադրության մեջ աշխատանքի պայմանների սա-նիտարական-առողջապահական հսկողությունը (վենտիլացիա, անհրաժեշտ չափով լուսավորու-թյուն, տաքություն և ալլն), հետեւում ե, վոր-պեսզի բանվորներն ու նրանց ընտանիքի ան-դամները ժամանակին ստանան բժշկական ոգնու-թյան բոլոր տեսակները, աջակցում ե բանվոր-ներին, վորպեսզի վերջիններս ոգտագործեն իրենց իրավունքները սոցիալական ապահովա-

գրության խնդրում (հիվանդության, հղիության և այլ դեպքում):

Գործարանային կոմիտեն աշխատավարձի բնագավառում բանվորների շահերը պաշտպանում ե գնահատու-կոնֆլիկտացին կոմիսիայի միջոցով, վորտեղ մտնում են լերկուական ներկայացուցիչ-ներ գործարկումից և աղմինիստրացիայից։ Դնահա-տու-կոնֆլիկտացին կոմիսիան քննում և հաս-տատում ե առանձին բանվորների տարիքային կոպարները, կոլեկտիվ պայմանագրերի համա-ձայն սահմանում արտադրողականության նոր-մաները և առանձին աշխատանքի գնահատումներ կատարում։ Դնահատու-կոնֆլիկտացին կոմիսիան քննում և ստուգում ե բանվորների բողոքներն աշխատավարձի սխալ հաշվելու մասին և այլն։

Այն վիճելի հարցերը, վորոնց մասին գնա-հատու-կոնֆլիկտացին կոմիսիան համաձայնու-թյան չի գալիս գործարկումի և աղմինիստրա-ցիայի հետ, տրվում են տեղական Աշխատանքի Բաժնին կից հրավիրվող հաշտարար ատյան։ Ատյանը կազմված ե յերկու վիճող կողմերի մեկական ներկայացուցիչներից Աշխատանքի, Բաժնի ներկայացուցչի նախագահությամբ։

Հաշտարար ատյանում համաձայնության չգա-լուց հետո, կողմերի ցանկությամբ, գործը կա-րող ե հանձնվել միջնորդ դատարան։ Դատա-

բանը կազմվում ե յուրաքանչյուր կողմից հա-
վառար թվով տրված ներկայացուցիչներից և
նախագահից, վորն ընտրվում ե կողմերի համա-
ձայնությամբ:

Հետեւյալ թվերը ցուց են տալիս, թե վի-
ճելի հարցերը 1924 թվի լնթացքում ինչպես են
լուծվել հաշտարար առյաններում.—բանվորների
ուժին վճռվել ե հարցերի $37^0/_{\circ}$ ը, աղմինիս-
տրացիայի ուժին՝ $11^0/_{\circ}$ ը, համաձայնությամբ
ե լուծվել հարցերի $52^0/_{\circ}$ ը:

Պետկան նեռ-
առ կուրչան դի պայքարի հատու գենքերից
մեջ գործազուր մեկն ե: (Հիշեր 4-րդ դրուցում
անը ուշա ու ելի նկարագրված գործադուլը): Բան-
յե.

Վոր դասակարգը հաճախ գործա-
դուլներ եր կազմակերպում հականեղափոխական
շրջանում: Բանվոր դասակարգը ներկայումս գոր-
ծու դուլներ ե կազմակերպում կապիտալիստական
յերկըներում:

Գործադուլը հարվածում ե վոչ միայն առան-
ձին կապիտալիստին կամ ձեռնարկատիրոջ, այլ
ամ շողջ կապիտալիստական հասարակակարգին:
Գործադուլը ձեռնարկատիրոջ ժամանակավորա-
ւում զրկում ե բանվորներից շահույթ պոկելու
և սրավորությունից, գործադուլը սասանում ե
կապիտալիստական վողջ տնտեսությունը:

Տնտեսության տարբեր բնադրավառները սերտ
կապված են միմյանց հետ: Յեվ դրա համար ել
ածխարդյունաբերության գործադուլի հետևան-
քով (վերցնենք Անգլիայի որինակը) կանգ ե առ-
նում և մետաղի արդյունաբերությունը, վորը
քարածուլիսը գործադրում ե վորպես վառելիք:
Գործադուլների միջոցով բանվոր դասակարգը
կոփվում ե կապիտալի դեմ մղած պայքարում:
«Կապիտալիզմի որոք գործադուլային պայքարի
վերջնական նպատակն ե հանդիսանում և կործա-
նել պետական ապահարատը, տապալել տվյալ պե-
տական դասակարգային իշխանությունը» (կուսա-
կցության 11-րդ համագումարի վորոշումներից):

Խորհրդային Միության մեջ պրոլետարիա-
տին թշնամի «պետական դասակարգային իշխա-
նությունը»—բուրժուազիայի իշխանությունը
տապալվել ե 1917 թվի հոկտեմբերին: Սահմանվել
ե պրոլետարական իշխանությունը, արդյունաբե-
րությունը գտնվում ե բանվոր դասակարգի ձեռ-
քին, արդյունաբերության ամրացումը—պրոլետա-
րի դիկտատուրայի հզորության դրավականն ե:

Խորհրդային Միության բանվոր դասակարգը
պետական արդյունաբերության մեջ գործադուլ-
ների դիմելու կարիքը չի զգում:

Արհմիությունները միշտ կարող են յուրա-
քանչյուր կոնֆլիկտ լուծել տնտեսական մարմին-

1000
1304



ների հետ խաղաղ ճանապարհով։ Առօչ մի զիտակից բանվոր, առավել յեվս կոմմունիստ կամ կոմյերիտական, յերբեք չի կարող գործադուլը պայքարի նախավոր զենք համարել պետական արդյունաբերության մեջ Խորհրդային արհմիությունները, վոր հանդիսանում են պրոլետարական դիկտատուրայի հենարանը, չեն կարող անցկացնել գործադուլը, վոր հարվածում ե սոցիալիստական արդյունաբերությանը, դրանով իսկ թուլացնում ե այդ պրոլետարական դիկտատուրան։ Խորհրդային Միության մեջ բանվոր դասակարգի լուրաքանչյուր յելույթի վերջնական նպատակը կարող ե լինել միայն պրոլետարական պետության և պրոլետարական դասակարգային պետական իշխանության ամրացումը» (կուսակցության 11-րդ համագումարի վորոշումներից)։

Ինչնո՞ւ բացատրվում, վոր թեպետ և սակավ, բայց, այնուամենայնիվ, պետական ձեռնարկություններում գործադուլներ են տեղի ունենում։ Կուսակցության 14-րդ համագումարը մատնանշում ե դրա պատճառները։ —

«Գործադուլը պրոլետարական պետության պայմաններում հանդիսանում ե վորպես վկայություն պետական ապահարատի* թերությունների,

* Բանաձեն այստեղ նկատի ունի անտեսական մարմինները, վորոնք հանդիսանում են պետական արդյունաբերության մի մասը։

հենց իրենց արհմիութենական մարմինների թուլության և ընդգրկված մասսաների կուլտուրական հետամնացության...

«Միությունից անկախ և առանց նրա գիտության բոնկված գործադուլը միշտ մատնանշում ե նրա աննախատեմնող քաղաքականությունը, միության և մասսայի հարաբերությունների խզումը, տվյալ ձեռնարկության մեջ միութենական աշխատանքի ընդհանուր թուլությունը»։

Վորպեսզի կանխվեն այն առանձին կոնֆլիկտները, վորոնք յերբեմն տեղի յեն ունենում մեզ մոտ՝ պետական ձեռնարկություններում, արհմիությունները պետք ե սերտ կապվեն բանվորական մասսաների հետ, պետք ե միշտ նախորդքիմանան բանվորների շարքերում ծագող անբարվականությունների մասին։ Արհմիությունները պետք ե կարողանան ժամանակին ուղղել տնտեսական մարմինների այն սխալները, վորոնք տեղիք են տալիս բանվորների դժգոհության։ Արհմիությունները պետք ե գործ դնեն բոլոր ջանքերը, վորպեսզի յուրաքանչյուր կոնֆլիկտ լուծվի բանվորների ու արդյունաբերության համար բարենպաստ ու տանելի ճանապարհով։

**Այս ամենը վերաբերում է մի-
ներք մասնավոր այն պետական արդյունաբերու-
թյուններում։ Ըստ մեզ մոտ գոյություն
ունի և մասնավոր արդյունաբե-
րություն։ 1924. 25 տնտեսական տարում այդ
արդյունաբերությունը տվել է ամբողջ արդյու-
նաբերական արտադրութիւնի 21 տոկոսը կամ մեկ
հինգերորդական մասը։**

**Վորմնք են արհմիությունների անելիքներն
այդ ձեռնարկություններում։ Մասնավոր ար-
դյունաբերության մեջ արհմիությունների անե-
լիքները վորոշակի տարբերվում են պետական
արդյունաբերության մեջ նրանց տարած աշխա-
տանքից։ Մասնավոր ձեռնարկության գլուխ ե
կանգնած կապիտալիստը, վորը շահագործում ե
բանվորներին և հանդիսանում է նրանց դասա-
կարգավին թշնամին։ Պետական ձեռնարկության
մեջ, արհմիություններն իրենց պահանջները
տնտեսական մարմիններին ներկայացնելիս, պետք
է հաշվի առնեն ամբողջ ժողովրդական տնտե-
սության շահերը։ Մասնավոր ձեռնարկության
մեջ արհմիությունները պետք է ձգտեն, վորպեսզի
բանվորներն ստանան աշխատավարձի ավելի
բարձր կոպարներ, իսկ դրանց հասնելու համար
արհմիությունները կանգ չեն առնում գործա-
դունների առաջ։ Պետական ձեռնարկության մեջ**

արհմիություններն արտադրության զարգացման
գործում ամեն կերպ աջակցում են ձեռնարկու-
թյան վարչությանը։ Մասնավոր ձեռնարկու-
թյուններում արհմիություններն իրենց առաջ
նման խնդիրներ չեն գնում։ Այստեղ նրանց միակ
և գլխավոր անելիքն ե—աշալորջ պաշտպանել
բանվորների դասակարգային շահերը յեվ ծեռք
առնել զոլոր միջոցները նրանց նյութական դրու-
թյունը բարելավելու համար։

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՒ- ՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՄՄԱՆ ԳՈՐԾԻՆ

**Բանվորները գրույցում մենք պար-
ոզնում են ենթե զեցինք, վոր ամբողջ բանվոր դա-
ստրաբերին։ սակարգը և յուրաքանչյուր առան-
ձին բանվոր շահագրգոված ե, վորպեսզի զար-
գանա պետական արդյունաբերությունը։ Արհմի-
ությունները, վորպես բանվոր դասակարգի մաս-
սայական կազմակերպություն, իրենց առաջ խնդիր
են գնում—աջակցել տնտեսական մարմիններին,
վորպեսզի վերջինները կարողանան արտադրու-
թյունը լավ կազմակերպել։ Հսկայական ու բարդ
գործարանավին մեխանիզմը կազմված է առան-
ձին մեքենաներից ու հաստոցներից (տահօք)։
Արտադրական վողջ մեխանիզմի կանոնավոր աշ-**

իստանքը հնարավոր ե միայն այն դեպքում,
յերբ յուրաքանչյուր մեղենայի յուրաքանչյուր
պտուտակ կարգին կաշխատի։ Մեխանիզմի մի
մասնիկի աշխատանքի միջոցին առաջ յեկած դա-
դարն անմիջապես անդրադառնում ե ամբողջ
գործարանի վրա։ Ճիշտ այդպես ե և արտադրու-
թյան բարելավման աշխատանքը։ Աշխատանքի
արտադրողականության բարձրացումը շատ հա-
ճախ կախված ե աննկատելի, առաջին հայացքից
աննշան խնդիրներից։

Այն, ինչ վրեպում ե վարչության ուշադրու-
թյունից (իսկ վարչությունը ղեկավարում ե ամ-
բողջ ձեռնարկությունը), նկատելի յե մնում մե-
քենաների վրա աշխատող առանձին բանվորների
համար։ Գործարանային կոմիտեն պետք ե ի մի
ժողովի բանվորների ամբողջ արտադրական փոր-
ձը։ Գործարանային կոմիտեն ձգտում ե, վորպեսզի
գործարանային վարչությունը միշտ տեղյակ լի-
նի բանվորների կողմից նկատված տնտեսարա-
րության բացերին, գործարանալին կիմիտեն հոդ
ե տանում, վորպեսզի տնտեսարարները հաշվի
առնեն այդ բացերի վերացման մասին բանվոր-
ների հայտնած կարծիքները։

Ոգնել անենա- Սակայն այդ դեռ չի նշանակում,
րարին, բայց վոչ թե արհմիությունները վորեւ չա-
փոխարինել։ Վով պետք ե փոխարինեն տնտե-
սական մարմիններին։

Ի՞նչ կստացվեր, յեթե արհմիությունները
միջամտեյին անտեսական մարմինների աշխա-
տանքներին։ Ի՞նչ հետևանքներ կունենայինք,
յեթե արհմիություններն արտադրական գծով կար-
գադրություններ անեյին։

Արհմիությունները չեյին կարող զբաղվել
իրենց հիմնական աշխատանքով։ Արհմիություն-
ները չեյին կարող ամբողջությամբ պաշտպանել
բանվորների շահերը, վորովհետև այն պրոֆ.աշ-
խատավորը, վորը կիսով չափ տնտեսարար ե դար-
ձել, այլև չի կարող ուղղել տնտեսարարների
սխանները, դժվարությամբ կնկատի այդ սխալ-
ները։ Այդպիսով արհմիությունները կկտրվեյին
բանվորներից։ Միաժամանակ կթուլանար տնտե-
սարարների պատասխանատվության զգացմունքը։

Կուսակցության 14. րդ համագումարի բա-
նաձևն ասում ե, թե արհմիությունները «պետք
ե վճռական պայքար մղեն իրենց մարմինների և
ներկայացուցիչների անմիջական, անձեռնաս
միջամտության փորձերի գեմ ձեռնարկություն-
ների և միավորումների կառավարման մեջ, վորն
առաջացնում ե միության փունկցիաների շվի-

թումը տնտեսականի հետ և վնասակար յերվկություն ու անպատճախանատվությունն եւ մտցնում ժողովրդական տնտեսության կառավարման գործի մեջ:

Արհմիություններն արտադրությունն իրենց ձեռքը վերցնելու նպատակ չեն հետապնդում: Արհմիությունները ձգտում են, զոր մեր տնտեսարարներն ամբողջ բանվոր դասակարգի շահերի համար խնամք տածեն դեսի պետական արդյունաբերությունը, գիշեր-ցերեկ մտածեն ձեռնարկության կարիքների մասին, խնայեն յուրաքանչյուր կոպեկը, բոպեն, և ամեն ինչի համար կը են բարոյական ու նյութական պատասխանափություն:

Անհրաժեշտ ե, զորպեսզի բանվորին մոտ լինեն արտադրության շահերը: Անհրաժեշտ ե, զորպեսզի յուրաքանչյուր առանձին բանվոր տեղյակ լինի, թե ինչ ե կատարվում ամբողջ ձեռնարկության մեջ: Այդ նպատակով գործարանային կոմիտեն ժամանակ առ ժամանակ բանվորների ընդհանուր կամ պատգամավորական ժողովներում զնում ե գործարանի տեսչի (կամ համքարության, արհեստանոցի վարիչների) զեկուցումն արտադրության վիճակի մասին:

Այդպիսի ժողովներում բանվորները տեսչի զեկուցումն «ի գիտություն» չեն ընդունում, այլ

վարչության գործունեյությունը գործնական քննադատության յենթարկելով՝ մատնանշում են բացերը և նրանց վերացման միջոցները:

Բանվորական ժողովներում գործարանի տեսչի կամ վարչության զեկուցումներ լսելը մի միջոց ե, զորով բանվորները մասնակից են արվում արտադրության կազմակերպման գործին:

Արագրական Այդ նպատակի իրագործման խորհրդակցու համար մեծ նշանակություն ու բարեւելու:

Նեն գործարանային կոմիտեներին կից արտադրական խորհրդակցությունները:

Արտադրական խորհրդակցությունների նպատակն ե՝ բանվորական մասսաների ոգնությամբ զարգացնել արտադրությունը: Արտադրական խորհրդակցությունները ձգտում են կուտակված փորձի փոխադարձ ոգտագործման հողի վրա ամրացնել գործարանային վարչությունների և բանվորական մասսաների միջև գոյություն ունեցող կապը:

Արտադրական խորհրդակցություններն իրենց որինական առաջարկներով մեծ ոգուտ են հասցնում արտադրության կանոնավորման: Արտադրական խորհրդակցությունների աշխատանքը բավականին կանոնավորվել է:

Սակայն արտադրական խորհրդակցություններն ունեն և բացեր: Կուսակցության 14-րդ

համագումարում ընկ. Տոմսկին իր զեկուցման մեջ թվել ե այդ բացերից միքանիսը: Լենինգրադում, Մոսկվայում և արդյունաբերական այլ կենտրոններում արտադրական խորհրդակցություններ կազմակերպված են 100. ից միայն 19 ձեռնարկություններում: Բավարար չափով աշխատանքի չեն կանչված անկուսակցական բանվորները: Արտադրական խորհրդակցությունները միշտ չեն կանոնավոր գործում. նրանք հաճախ զբաղվում են չափազանց ընդհանուր խնդիրներով, մոռացության տալով արտադրության համար կենսական նշանակություն ունեցող «մանր» հարցերը:

Արհմիությունների առաջ խնդիր ե դրված՝ բարելավել արտադրական խորհրդակցությունների աշխատանքը: Արհմիությունները պետք ե հիշեն, վոր արտադրական խորհրդակցությունները հանդիսանում են բանվորական մասսաների խորհրդային տնտեսության շինարարության գործի մեջ քաշելու լավագույն ձեվը: Արտադրական խորհրդակցությունների ոգնությամբ պետք ե բանվորների միջից առաջ քաշել և դաստիարակել տնտեսարարների ու կառավարիչների նոր կադրեր:

Ս.րհմիությունները՝ պետական կարող ենք յեղակացնել՝ արհմատության միությունները գործադրում են իրենց բոլոր ուժերը, վորպեսզի տնտեսության կանոնավորման համար ողնեն տնտեսական մարմիններին, վորպեսզի բոլոր բանվորներին մասնակից անեն արդյունաբերության լավագույն կազմակերպման գործին:

Դրանով իսկ արհմիությունները բանվորներին մոտեցնում են արտադրության կառավարման աշխատանքին: Դրանով իսկ արհմիությունները բանվոր դասակարգի միջավայրից տնտեսություն կառուցողների նոր կադրեր են պատրաստում: Դրանով իսկ արհմիությունները բանվորներին մասնակից են անում Խորհրդային պետության շինարարությանը:

Ահա թե ինչու արհմիությունները հանդիսանում են արտադրության կառավարման դպրոցը, պետական շինարարության դպրոցը:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԴՐՈՌՑՆ Ե

Ս.րհմիություններն իրենց աները մօս պիտի ուած դրված խնդիրները կարող են լինեն բանվորա. իրագործել միայն իրենց անդամկան մասսանեւ. ների մասսաների հետ սերտ կապ պահպանելու դեպքում: Արհմեստակցական

միությունը պետք ե հաշվի առնի իր անդամների կարիքներն ու պահանջները և ժամանակին արձագանգի նրանց:

Յերկրի տնտեսական աճման հետ միասին խտանում են բանվոր դասակարգի շարքերը, բարելավգում ե բանվոր դասակարգի նյութական դրությունը, աճում ե բանվորների ակտիվությունն ու ինքնագործունեյությունը: Բանվորն իր արհեստակցական միությունից պահանջում է ավելի լավ ղեկավարություն: Բանվորների կարիքների նկատմամբ հայտնաբերած արհմիությունների անուշադիր վերաբերմունքը, բանվորների նյութական դրության բարելավման առթիվ նրա անբավարար աշխատանքը մեծ դժգոհություն և առաջացնում բանվորական միջավայրում: Բանվորները դժգոհում են նաև այն գեղքում, չերբ արհեստակցական միությունն առանց բանվորների գիտության զանազան համաձայնություններ և կնքում տնտեսարարների հետ, իսկ իր անդամներին միայն առաջարկում ե կնքված համաձայնություններն անշեղորեն կենսագործել: Ահա ինչու կուսակցության 14.դդ համագումարն արհմիությունների առաջ խնդիր ե դնում՝ «իր ամբողջ ապահարատն ել ավելի մոտեցնել մասսաներին, իր աշխատանքի բոլոր ձևերն ու մեթոդները հարմա-

րեցնել պրոլետարական ակտիվության և ինքնագործունեյության զարգացմանը»:

Գործարանային կոմիտեյի աշխատանքը պետք ե ընթանա բանվորների համար նկատելի կերպով: Յուրաքանչյուր բանվոր և ամեն ժամանակ պետք ե տեղակ լինի գործարկութի ձեռք առած այն միջոցների մասին, վոր շոշափում են իր շահերը: Հատկապես լայն քննության յինթակա յե կոլեկախվ պայմանագրերի կնքումը: Գործարկութիւնների ընտրության ժամանակ պետք ե առաջադրել այնպիսի թեկնածուներ, վորոնց ճանաչում ե բանվորական մասսան. ընտրական ժողովում անհրաժեշտ ե քննության առնել յուրաքանչյուր թեկնածություն առանձին-առանձին:

Վորպեսզի մեզ համար պարզ լինի, թե ինչպես պետք ե աշխատի գործարանալին կոմիտեն, մի որինակ բերենք այն մասին, թե ինչպես չպետք ե աշխատի գործարանային կոմիտեն:

Որինակը վերաբերում ե 1925 թ. աշնանը և տեղի է ունեցել Իվանովո-Վոզնեսենսկի նահանգում:

«Յերկու անգամ նշանակվել ե ընդհանուր ժողով մեր գործարանային կոմիտեյի գործունեյության հաշվետվության հետ միասին, բայց ամեն անգամ լեկել են 30—50 մարդ, չնայած նրան, վոր գործարանում աշխատում են 5 հաղար 600 հոգի:

Յերորդ անգամ գործարանային կոմիտեին հաջողվեց հավաքել մոտ 100 մարդ և հաշվետվությունը լսվեց:

— Բնկերներ, յես կարձ պիտի զեկուցեմ, — հայտարարում ե գործարանային կոմիտեյի անդամը. — աշխատանքն ընթացել ե ծանր պայմաններում, վորովիետև տեղի յե ունեցել նոր գործի գցվող գործարանն անցնող բանվորների փոխադրությունը: Ուստի և այդ հանգամանքը վատե անդրադարձել գործարանային կոմիտեյի աշխատանքի վրա:

Այնուհետև զեկուցողն ունկնդիրներին հեղեղում ե թվերի տարափով, վորից միայն այս կարելի յե հասկանալ. գործարանային կոմիտեյի ու հանձնաժողովների մեծամասնության աշխատան. քը կայացել ե նրանում, վոր ժողովներ են արել ու արձանագրություններ կազմել... Իսկ բանվորները դրանից վոչ մի ոգուտ չեն ստացել: Այդ մատնանշեցին և իրենք բանվորները՝ զեկուցողին ուղղած հարցերի միջոցով:

— Իսկ ինչու տարի ու կեսվա ընթացքում չե յեղել բանվորների բժշկական քննություն: Գործարանում պատուհանների ապակիներն անգամ չեն գցված: Այժմ իսկ փշում ե քամին, ապա ինչ կլինի ձմեռը: Ինչու գործարանային կոմիտեն միջոցներ ձեռք չի առնում խուզարկությունները վերացնելու համար:

Մաքերի փոխանակությանը բանվորներից և վոչ մեկը չի մասնակցում:

— Զարժե խոսել, — իրար մեջ ասում են բանվորները, — միևնույն ե, մեր առաջնորդներին ուշը չեն դարձնի»:

Այդ գործարանային կոմիտեն պարփակվել ե իր մեջ, անհրաժեշտ չի համարել ծանոթացնել բանվորներին իր աշխատանքի հետ: Գործարանային կոմիտեն չի արձագանգել բանվորների կարիքներին: Յեկ վորպես հետևանք՝ գործարանային կոմիտեն կողցը ել ե բանվորների վստահությունը:

Գործարանային կոմիտեն ձեռնարկության բանվորների ամբողջ մասսայի հետ կապվելու համար ունի մի շարք ողակներ: Հատկապես մեծ նշանակություն ունեն պատգամավորները: Պատգամավորները բանվորներին իսկույն ծանոթացնում են ժողովների վորոշումներին, պատգամավորների աշխատանքի շնորհիվ բանվորների մեծ քանակ կարելի լե քաշել ակտիվ պրոֆաշխատանքի մեջ: Պատգամավորները միաժամանակ հանդիսանում են արհեստակցական նոր ուժերի մի աղբյուր: Լավ աշխատող գործարանային կոմիտեն կարող ե այնպիսի վիճակ ստեղծել, վորպեսզի յուրաքանչյուր բանվոր վորևէ պրոֆաշխատանք կատարի:

Արհեստակցական միությունն իր աշխատանքով պետք ե ձգտի, վորպեսզի յուրաքանչյուր անկուսակցական բանվոր ու ծառայող «իր արհեստակցական միության մեջ տեսնի իր մոտիկ և հարազատ կազմակերպությունը, վորն ընտըրվում և վերահսկվում ե իր կողմից և իրեն հաշվետու յե» (14-րդ կուսհամագումարի բանաձևից):

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՆՈՐ ՇԵՐՏԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բանվորական նոր շերտերի գատարակումը Արհմիութենական աշխատանքութեաբերի քի բարելավումը, նրա աշխուժատիարակումը ժացումն ավելի անհրաժեշտ ե բութեք.

այժմ, յերբ արտադրության մեջ են քաշվում գյուղից յեկած բանվորական նոր շերտեր:

Մեր ձեռնարկություններում այժմ հավաքվել ե հին բանվորների գլխավոր մասսան, վորի մի մասը պատերազմի տարիներին ժամանակավորապես հեռացել ե արտադրությունից՝ տնտեսական քայլայման հետևանքով։ Ծավալվող արդյունաբերության համար անհրաժեշտ բանվորների նոր կադրերը գալիս են և պիտի գան գերազանցապես գյուղից։

Բանվորների այդ նոր շերտերը չունեն հին պրոլետարների մարտական փորձը, չեն անցել

«աշխատանքի կոփող դպրոցը»։ Նրանք գործարն են գալիս գյուղացիական տրամադրություններով, ձգտում են մեկուսանալ բանվորների մնացած մասսայից, նրանք վորոշ անվտահությամբ են վերաբերվում հասարակական աշխատանքին։

Անհրաժեշտ ե դաստիարակչական խոցոր աշխատանք կատարել այդ նոր բանվորների մեջ։ Պետք ե նրանց մոտեցնել անտեսական շինարարության, ոգնել, վորպեսզի նրանք կարողանան յուրացնել իրենց անձնական շահերի և հեղափոխության ընդհանուր անելիքների միջև գոյություն ունեցող կազը։

Պետք ե սկսել նոր բանվորներին միության մեջ գրավելուց։ Պետք ե նրանց համոզել միության ոգտավետության և անհրաժեշտության մեջ։ Նոր բանվորը միության մեջ պետք ե մտնի իր ազատ և կամավոր վճռմամբ։ Նոր բանվորին պետք ե տալ միութենական թեկուզ և փոքր պարտականություն-ակումբին կից մի վորեեխմբակի, շեֆական ընկերությունների մեջ քաշել և այլն։

Կոլեկտիվ պալմանագրի ըննության ժամանակ նոր բանվորները տեսնում են, վոր աշխատավարձի մակարդակը սահմանվում ե կապված յերկորի միջոցների հետ։ Ընդհանուր ժողովում,

ուր գործարանի տեսուչը զեկուցում և արտադրության կացության մասին, նոր բանվորը համոզվում է, վոր բանվորին մեծապես հետաքրքրում եւ արտադրության կացությունը: Այսպես, մեկ աստիճանից անցնելով դեպի մյուս աստիճանը, բանվորների նոր կաղըերն արհեստական միությունների ոգնությամբ բարձրանում են հասարակական սանդուղքներով և դառնում են սոցիալիզմի ակտիվ կառուցողները:

Վերադաստիարակելով բանվորների ների նոր շերտերը, արհեստագույնում կցական միություններն ուժեղացնում են պրոլետարիատի ազգեցությունը գյուղացիության նկատմամբ: Դրանով դեռ ամեննեին չվերջացավ արհեստական միությունների աշխատանքը գյուղում:

Ինչպես նշում ե կուսակցության 14-րդ համագումարի բանաձեռը, նոր բանվորների մեջ աշխատանք տանելուց բացի, «միութենական ազգեցությունը գյուղը թափանցելու» դեռ յերեք ճանապարհ ել կա. Միության աշխատանքը հողանտառ աշխատավորների մեջ, աշխատանքը սեղոնային բանվորների (և զլսավոր առմամբ կառուցողների) մեջ, աշխատանքը այն ձեռնարկություններում, վոր գտնվում են գյուղական վայրերում:

Հողանտառ և կառուցողների միությունը ունեցել են քանակական մեծ աճում: Հողանտառ միությունը 1924 թվին ուներ 297 հազար անդամ, իսկ 1925 թվին՝ 497 հազար, այսինքն մի տարվա ընթացքում աճել է 200 հազար հոգով: Կառուցողների միությունը 1923 թվին ուներ 130 հազար անդամ, իսկ 1925 թվին՝ 327 հազար: Այդ թվերը ցույց են տալիս, թե ինչքան խոշոր ե արհմիությունների գյուղում տանելիք աշխատանքի նշանակությունը:

Մեծ նշանակություն ունի նաև արհմիությունների աշխատանքն այն ձեռնարկություններում, վոր գտնվում են գյուղական վայրերում:

Արհմիությունների այդ խոշոր դերի՝ կոմմունիզմի գպրոց լինելու մասին՝ «կազմիրի իլլիչ Լենինը գրել ե: —

«Արհմիությունների ուժեղացրած, խորացրած աշխատանքը (մանավանդ կուլտուր-լուսավորականը) գյուղերում գտնվող ձեռնարկություններում կարող ե պետք ե վերածի այդ ձեռնարկությունները խորհրդային կուլտուրայի ու ջախների, պրոլետարական ազգեցությունը գյուղում տարածող հենակետների» (14-րդ կուսամագումարի բանաձեից)

Աճում ե բանվորների ակտի-
ների կուլտուր-
վությունն ու ինքնագործունե-
լուսավորական յությունը. միաժամանակ աճում
աշխատանքը.

Են և բանվորների կուլտուրական
պահանջները: Բանվորը ցանկանում է ընդարձա-
կել իր գիտելիքների շրջանակը: Ահա ինչու կու-
սակցության 14. րդ համագումարն անհրաժեշտ է
համարում, վորպեսզի արհիությունները «հա-
տուկ ուշադրություն դարձնեն իրենց կուլտուր-
լուսավորական աշխատանքների վրա»:

Այդ աշխատանքի գլխավոր լծակը հաճդիսա
նում ե ակումբն ու կարմիր անկյուննը: Ակումբն
իր աշխատանքները պետք է կառուցի այնպես,
վորպեսզի «կարողանա կապակցել իր անդամների
հանգստի և առողջ զգացմության պահանջների
բավարարումը քաղլուսվարական և դաստիարակ-
չական ինդիքների հետ»:

Հատկապես կարենու ե ակումբները գրա-
վել հասակավոր բանվորներին. մինչև այժմ նրանց
մասնակցությունը ակմբային աշխատանքների մեջ
յեղել ե շատ աննշան:

Միքանի յեղբակացություն-
ները—կոմմուն ներ հանենք արհմիությունների
տիզմի գպրոց ե. աշխատանքների մասին մեր բո-
լոր ասածներից:

Արհեստակցական միությունները կազմակեր-

պում են բոլոր բանվորներին զլիավին: Արհես-
տակցական միություններում բանվորները ծեռք են
ըերում հասարակական աշխատանքի առաջին փոր-
ձը: Արհեստակցական միությունները սովորեցնում
են բանվորներին իրենց անձնական շահերը շակ-
կապել հեղափոխության ընդամուր ինդիքների հետ:
Արհեստակցական միություններում բանվորները
սովորում են արդյունաբերության կառավարման: Արհեստակցական միությունները պատրաստում են
մեր տնտեսության, սոցիալիստական հասարակա-
կարգի նոր կառուցողներ: Ահա թե ինչու արհ-
միությունները մենք անվանում ենք կոմմունիզմի
դպրոց:

Արհմիությունների այդ խոշոր գերի՝ կոմ-
մունիզմի դպրոց լինելու մասին Վ. Ի. Լենինը
գրել ե.

«Արհեստակցական միությունները, վորպես
կոմմունիզմի դպրոց, պետք է սպասարկեն աշ-
խատավոր մասսաների առողջյա կրանքի բոլոր
կարիքները, հետզհետե պետական շինարարու-
թյան գործի մեջ գրավելով՝ աշխատավորության
ամենալայն շերտերը, միշտ լուսաբանելով նրանց
ճանապարհը մեր ծրագրի գաղափարներով, տա-
նելով նրանց մասնավորից գեպի ընդհանուրը,
հետզհետե բարձրացնելով նրանց անկուսակցա-
կանությունից գեպի կոմմունիզմը»

Կուսակցության վեկավարությունը արհմիությունները ճիշտ և հաշեահմիությունը ջողությամբ իրագործում են և ների նիւթ առ կիրագործեն իրենց՝ կոմմունիզմատանքը.

մի դպրոցի անելիքները։ 14. բգ համագումարի բանումնեն այդ առթիվ պատասխանում եւ. —

«Արհմիություններն իրենց խնդիրները կկարողանան կենսագործել միայն Համկոմկուսի՝ վորպես ամբողջ բանվոր գասակարգի առաջնորդի դեկավարությամբ։

«Ամբողջ կուսակցության և առանձին կուսակցական մարմինների խնդիրն եւ՝ ապահովել արհմիությունների ճիշտ և սիստեմատիկ զեկավարությունը, իրականացնելով այդ արհմիությունների համապատասխան կոմմունիստական ֆրակցիաների միջոցով»։

Կուսակցության աշխատանքի մասին, մենք կխոսենք հաջորդ զըստյանում։

ՀԱՐՑԵՐ

- Ինչու արհմիությունները պետք եւ պաշտպանեն բանվորների շահերը պետական ձեռնարկություններում։
- Ինչից պետք եւ յենել աշխատավարձի սակարդակը սահմանելիս։
- Վորոնք են կոլեկտիվ պայմանագրի անելիքները։
- Ինչու անթույլատրելի յեն գործադուները պետական ձեռնարկություններում։
- Ինչով եւ տարբերվում արհմիության աշխատանքը մասնավոր ձեռնարկություններում այն աշխատանքից, վոր տանում և նա պետական ձեռնարկություններում։
- Ի՞նչպես եւ իրականացվում բանվորների մասնակցությունն արդյունաբերության մեջ։
- Ինչու արհմիությունը մենք համարում ենք արտադրության կառավարման դպրոց։
- Ի՞նչպես պետք եւ աշխատի գործարան ային կոմիտեն, վորպեսզի սերտ կապ ունենա բանվորական մասսայի հետ։
- Արհմիություններից վորոնք հնարավորություն ունեն իրենց ազգեցությունը տարածելու գյուղում։
- Ինչու մենք արհմիությունները համարում ենք «կոմմունիզմի դպրոց»։

ԱՇԽԱՏԱՆՔ

- Իմացիր՝ արդյոք ձեր ձեռնարկության մեջ կընք վաճ եւ կոլեկտիվ պայմանագիր, Պարզից, թինչպիսիք հն առաջին և ամենաբարձր կողմուների դրաւյքները։

ՀՀ Ազգային գրադարան



NL0193107

2. Պարզիքը՝ թե 1926 թվի առաջին կետում ինչպես և փոխվել աշխատավարձը և աշխատանքի արտադրողականությունը այն ձեռնարկության մեջ, վորտեղ գույ աշխատում ես (այդ աշխատանքը հեշտ կլինի կատարել խմբովին):
3. Յեթե յեղել ես արտադրական խորհրդակցություններում, գրիք կամ պատմիք, թե ինչ հարցեր են քննվել այնտեղ:
4. Գրիք, թե արհմիութենական ինչ աշխատանք ես կատարում և ինչում և նա արտահայտվում:

